

տութիւնը համակրութիւն մը չզգան Գերմանիոյ մեծ Ռաեհնադպրին անուան և ոմանք ատեն իսկ, սակայն իւր հայրենեացը մեծութեան միշտ առաջին գործիչը պիտի համարուի:

Հ. Մ. Վ. ՆՈՒՐԻՒԱՆ

ՄԱԳՆԻՍՍԿԱՆ ԲՈՒՆ

HYPNOTISME

(Շար. տես էջ 218)

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԿ

Մագնիսական քնոյ պաշտպանը և ամոմց փաստերն:

Նախընթաց գլխոյ մէջ մագնիսական քնոյ պաշտպանը զանազան փաստերով հերքեցին հակառակորդաց մէջ բերած առաջին կէտը՝ իբր թէ մագնիսական քունն և անոր երեւոյթներն՝ բնական բաներ չեն, այլ բնական թենէ դուրս, վեր, հետեւաբար՝ ստատանայական են. — ապա այս երեւոյթներուն բնական իրողութիւններ ըլլալը ըստ կարելւոյն պարզեցին. — Ներկայ գլխուն մէջ նոյն պաշտպանը պիտի լուծեն՝ հակառակորդաց ամենածանր առարկութիւնները, որ են. մագնիսական քունն իսկապէս անբարոյական է և վնասակար աստղաբանութեամբ:

Ա

Հակառակորդը՝ մագնիսական քնոյ անբարոյականութիւնը կը ցուցնեն գլխաւորապէս, ինչպէս վերագոյն տեսանք, այս իմաստասիրական ճշմարտութեամբ՝ թէ « կամաւորապէս զրկել ինքզինքը իրեն ազատութենէն բացարձակապէս արգիլուած է, իրեն հակառակ օրինաց բնութեան: Իսկ արդ մագնիսական քնոյ գործածութեան մէջ քնացող ենթական բոլորովին կը զրկուի իւր ազատ կամքէն: Ուրեմն անբարոյական է մագնիսական քունն »:

Այս առարկութեան կը պատասխանեն պաշտպանքն այսպէս. Մագնիսական քունն երբեք քնացող ենթականի իրեն ազատութիւնը, գիտակցութիւնը և միտքը չի վերցնեն, այսինքն՝ այս կարողութիւնները արմատեն չի Զնջեր, այլ միայն անոնց գործածութիւնը, ներգործութիւնները առ ժամն առ կտի կը ձգէ: Եւ յիրուի, հազարաւոր սպաներ, պաշտօնեաներ, ուսուցիչք և ուսանողք, որք քսան, քառասուն անգամ մագնիսական քնոյ ենթարկուած են՝ անոր արգասիքները իրենց վրայ փորձելու համար, և հիմա իրենց սոսկական ազատ կամքն ու միտքն ունին: Ուրեմն երբոր հակառակորդք կը պնդեն թէ մագնիսական քունն կը վերցնէ ազատութիւնը, միտքը, և այլն, հասկնալու է այսպէս թէ նա՝ այս կարողութեանց գործածութիւնը առկա իր կը ձգէ հինգ, տասը վայրկեան, քառորդ մը, օր մը: Եւ միթէ այս պատճառաւ՝ մագնիսական քունն իբր անբարոյական դատապարտելի է. — եթէ այդպէս է, ինչո՞ւ նոյն հակառակորդք չեն դատապարտեր քլորոակերպի գործածութիւնը՝ իւրերն անբարոյական, քանի որ այս ալ մարդու հոգեկան կարողութեանց գործադրութիւնը առկա կը ձգէ տասը վայրկեան, քառորդ մը. — մինչդեռ ընդհակառակն կը հաստատեն՝ թէ ներելի է գործածել քլորոակերպը « ծանր հարկի դիպածներու մէջ, կարեւոր զգուշութիւնները ընելով »: Ուրեմն ծանր հարկն պահանջած ատեն, կարեւոր զգուշութիւնները ընելով, անբարոյական գործ մը ըրած չըլլաւ մարդ մը՝ եթէ ինքզինքը ձգէ առժամանակեայ այնպիսի միջոցի մը մէջ՝ յորում միտքն ու կամքն չգործեն: Հետեւաբար՝ եթէ հարկ եղած զգուշութիւններն ըլլան, ծանր հարկին մագնիսական քունը գործածելն չէ անբարոյական:

Մտուելու հակառակորդաց այս առարկութեան հիմն է, ինչպէս կը գրէ տեղ. կրաստէ, « չափազանցութիւն մը, որ բոլորովին կը խանգարէ մագնիսական քնոյ էութիւնը և սահմանը »:

Ք

Հակառակորդը կը պնդեն դարձեալ յաւելելով այսպէս. « Ինձադրեմք թէ մագնիսական քունն հոգեկան կարողութիւնները չի ջնջեր, բայց նա՛ ենթակաները բարոյականին տեսակէտով մեծամեծ վտանգներու կ'ենթարկէ: Որովհետեւ մագնիսացրնողն գրեթէ բացարձակ կերպով կը տիրէ մագնիսացողին վրայ, և մագնիսացրնողն կրնայ թելադրել անոր որ և է խօսք, գործ, մտածութիւն, և այլն. ենթական՝ իրեն ձեռքը գործիք մ'է, զոր կրնայ գործածել ուզածին պէս¹ »:

Պաշտպաններուն պատասխանն է հետեւեալն. Շատ լաւ, մագնիսական քունն թող վտանգաւոր համարուի. բայց ասկէ կը հետեւի թէ նա անբարոյական ալ է: Ոչ երբեք. վասն զի միթէ ամէն վտանգաւոր ինչ է՞ միանգամայն անբարոյական: Մագնիսական քունը դատապարտելու համար հարկ է նախ ցուցնել թէ անկարելի է այս վրտանգներուն առջեւն առնուլ. — մինչդեռ ընդհակառակն շատ դիւրաւ կարելի է այս վտանգներէն ազատ մնալ, Պոնիին խորհրդոյն հետեւելով, այսինքն, « Երբեք այս կանոնէն շեղելու չէ. երբոր կ'ուզէ մէկն մագնիսական քնոյ ենթարկուիլ, հան ներկայ գտնուի կամ հայրն, կամ ամուսինն, և այլն. որ թէ՛ մագնիսացրնողին և թէ՛ մագնիսացողին եւրաշխաւոր ըլլայ² »: Միայն այս կանոնին պահպանութեամբ՝ « անհնարին կ'ըլլայ որ և է գործելի եղեան³ »:

Միթէ քրոակերպով անզգայացրնելու մէջ չկան այս ենթադրուած վտանգներն. ինչո՞ւ մեր հակառակորդներն՝ զայն օրինաւոր կը համարին հարկի դիպուածներուն մէջ, իսկ մագնիսական քնոյ գործածութիւնը կարելորդ դէպքերու մէջ կը դատապարտեն իբրեւ անբարոյական:

Պ

վասն զի, կ'ըսեն հակառակորդը, մագնիսացրնողը կը գործածեն անբարոյական կամ ապօրինաւոր միջոցներ՝ քնացրնելու համար: — Զայդ կը հաստատեն Տիմոն, փալլէ, Օքերովիչ, Ռիշէ, և այլն:

Կը պատասխանեն պաշտպանքն. Միթէ ամէն մագնիսացրնողը դատապարտելի՞ միջոցներ կը գործածեն. — ինչո՞ւ կը շփոթէք արդէն բարոյական շունեցող և անպատիւ բողոքանդները՞ գիտուն և պատուաւոր մագնիսացրնողներու հետ: Ի՞նչ դատապարտելի բան կայ Պէրնէշայի մագնիսացրնելու կերպին մէջ, որ կ'ըսէ իւր հիւանդին. « Ա՛յս բազկաթոռը, նստէ՛ հանգիստ. փակէ՛ աչուլներդ, և միայն մտածէ՛ » թէ պիտի քնանաս... կրնաս քնանալ... քնանալու վրայ ես... աւստիկ քունն... կը քնանաս... քնացիր... »: Եւ հիւանդն կը քնանայ:

Սակայն կը պնդեն հակառակորդը թէ « մագնիսութիւնն՝ մագնիսացողին մէջ առաջ կը բերէ սաստիկ զգացողութեան կիրք մը և գրեթէ անդիմադրելի ձգում մը առ մագնիսացրնողն⁴ », ուսկից յայտնի է թէ շատ չարիք կրնան առաջ գալ, և ասոր օրինակներն բազմաթիւ են:

Պաշտպանք մագնիսական քնոյ կ'ընդունին՝ թէ այդ այդպէս է, բայց կը պատասխանեն. Միթէ բուն մագնիսական քունն է այս իրողութեան պատճառն. — ո՞վ ապացուցեր է զայդ. — ապացուցընելու փորձը ո՞վ բերեր է. ոչ ոք:

Դարձեալ, այս տեսակ զգացումներ յաճախ կրնան պատահիլ ոչ միայն մագնիսացրնողաց, այլ և փաստաբաններու, սովորական բժշկներուն, ծառայի, գերձակի, և այլոց նկատմամբ. — ասկէ կը հետեւի՞ թէ այս արուեստներն անբարոյական են:

Դարձեալ, եթէ բժշկուած ենթական՝ եր-

1. F. Clavierie, *Etudes sur l'hypnotisme*, էջ 70:

2. *Le somnambulisme provoqué*, էջ 39:

3. D.r Grasset, *L'hypnotisme et les medecins*

catholiques.

4. Touroude, *L'hypnotisme, ses phenomenes et ses dangers*, էջ 80:

բեմն գինքը մագնիսացրնողը նկատելով իւրբիւ իրեն բարերարն, երախտագիտութեան և խանդավառանաց զգացում մը ունենայ անոր վրայ, գատապարտելի՞ է այդ:

Եթէ ուրեմն այս ամէն առարկութիւնը սոսկ անհիմն ամբաստանութիւնք են, ինչո՞ւ պիտի գատապարտուի մագնիսական քունն:

Պ

Գատապարտելի է, կը պատասխանեն հաւատակորդք, մագնիսական քունն, վասն զի այն՝ ինքն յինքեան իւր էութեամբն փաստարկ է առողջութեան: Անթիւ, անհամար զէպքեր և իրողութիւններ կը հաստատեն այս ճշմարտութիւնը. որչափ երիտասարդներ սպուշ պարձած, որչափ անձինք հիւանդացած, որչափներ խնթեցած են. — հարկ չէ մանրամասն պատմել այս զէպքերը. խոր ուղաւորութիւն կ'ընէ ընթերցողին վրայ՝ տեսնել որ այսչափ մարդիկ ենթարկուելով մագնիսական քնոյ, թուառութեան մէջ ինչ կած են: Ուրեմն մագնիսական քունն՝ փաստարկ չէ՞ առողջութեան: — Այսպիսի հարցման:

Պարզպանք մագնիսական քնոյ կը պատասխանեն ուրիշ հարցմամբ մը. Ո՞րի՞նչ մագնիսական քունն ինքն յինքեան էութեամբն փաստարկ է: Այո և կարեւոր ապացուցանելի կէտն: — Ջուրն, հաց ու միս, գինին ալ շատ զոհեր բրած են մագնիսական քնոյ պէս. — և արգեօք այս իրերը իրբիւ իրենց էութեամբն փաստարկը պիտի համարինք: Անշուշտ ոչ, վասն զի անոնք իրենք իրենց մէջ լաւ են, բայց փաստարկ կ'ըլլան չափազանց, ժամանակէն դուրս գործածութեամբ, զեղծմամբ: Նոյնպէս մագնիսական քունն ալ. — ինքն յինքեան լաւ է, բայց եթէ անխտիր ամէն մարդու վրայ գործադրուի, առանց ուշ դնելու իւրաքանչիւր անձին խառնուածոյն, կանխաւ ունեցած տրամադրութեանց, ներկայ վիճակին, անխտիր գործածուին մեղմ

կամ սաստիկ միջոցներ, այն ատեն մագնիսական քունն եւս գատապարտելի է իրբիւ փաստարկ նշխարական առողջութեան. — բայց յանցանքն որուն է, մագնիսական քնոյ ընաւ ոչ. այլ անմիտ, խաբարայ և անվարժ մագնիսացրնողներուն և մագնիսացողներուն:

Եթէ խոհեմութեամբ, ճարտարութեամբ գործածեն զայն քաջ բնախօս և բնագիտն բժիշկներ՝ ճիշդ այն չափով որ հիւանդին օգուտն ու վիճակն կը պահանջեն, մագնիսական քունն ամենեւին փաստարկ չէ:

« Կը համարիմ, կ'ըսէ քաջ բժիշկ մը, թէ բժշկական մագնիսութեան մէջ կարելի է բուրոյթին ազատ մնալ մագնիսական քնոյ չառաչար հետեւանքներէ. և կ'ընամ ամենայն անկեղծութեամբ ըսել՝ թէ համոզուած եմ որ այս միջոցով ճշմարիտ ծառայութիւններ բրած եմ հիւանդաց, առանց մէկուս մը վնասելու¹»: Եւ նոյն բժիշկն է առաջինն խօստովանելու՝ թէ « մագնիսական քունն կրնայ փաստարկ ըլլալ մէկ բանի վիպաւածներու մէջ, և պէտք չէ գործածել զայն և ոչ իսկ իրբիւ բուժիչ² ». — այլ ապա կը յաւելու. « Ասիկց յայտնի է թէ մագնիսական քունն ալ կը մօտեցնէ միւս բուժական ազդակներու, որոնց ուսումնասիրութեան իւրաքանչիւր գլխոյն մէջ կան թէ՛ նշանակք և թէ՛ հականշանակք³ », այսինքն, օգուտներն ու փաստները:

Ե

Հակառակորդաց մէջ բերած առարկութիւններով՝ մագնիսական քնոյ աննպաստ մասերը ցարդ պարզեցին, բացատրեցին և հերքեցին անոր պաշտպաններն, Տիւններ հիմա, ինչպէս որ արգարութիւնն կը պահանջէ, սակաւիկ մ'ալ անոր օգուտները, աղէկութիւնները և նպաստաւոր կողմերը, զորս կը պարզեն նոյն պաշտպանք:

Պրէտ առողջացուցած է անդամաւոյ մը,

1. D. r Grasset, *L'Hypnotisme et les Médecins catholiques*.

2. Նոյն:

3. Նոյն:

որ տասնուհինգ օրուան մէջ սկսաւ ողջա-
ողջ քալել, — աօքդ. Վան վէլանի՝ *Wan-
elien*, նոյնպէս բժշկեց անպամաւրդ մը, որոյ
վրայ ամէն բժշկական փորձ եղած էր, և ոչ
մէկն յաջողած : — Պէրնշայտի *L. A. sug-
gestion* գրոց մէջ կրնայ ամէն ոք կարդալ
բազմաթիւ բժշկութիւններ, ստոյգ և իրա-
կան զէպքեր, որոց մէջ յայտնի կը տես-
նուին մագնիսական քնոյ օգուտներն ալ :
Ինքն Պէրնշայտ կը պատմէ իրեն համար՝
թէ ինչպէս բժշկեր է մատուցները փայտ
դարձած երիտասարդ մը, ուրիշ քառասնա-
մայ մարդ մը՝ որ երբեմն երբեմն կը կար-
կամէր, և ջղերը քաշուելով չէր կրնար գրել :
— Բաւական է ինկաօի *Thérapiutique
suggestive* կարգաւ, նոյնպէս նոյնանուն
գիրքը Քիլլէրի, Պեռլինու և Փարիզու *Revue
de l'Hypnotisme*. — Վերջին օրինակ մ'ալ
այս ըլլայ. Գառանամայ մէկն, արտաքուս-
պէս առողջ և զօրաւոր կազմուածքով, շատ
անգամ, ուտելու, քալելու ատեն, ընկերու-
թեան մէջ շնչառութեան պակասութեամբ կը
նեղուի. — և ոչ իսկ խօսելու կարողութիւն
կ'ունենար : Փաջ մագնիսացրնող սերտ բա-
րեկամ մ'ունէր սա . արդ այս բարեկամն
ըմբռնեց որ այս երեւոյթն ջղային բան մ'է,
և առաջարկեց հիւանդին որ մագնիսութեամբ
քնացընէ զինքը բժշկելու համար : Հիւանդին
ճարը հատած, վասն զի ամէն միջոց անօ-
գուտ եղեր էր, յանձն առաւ այդ առաջար-
կը. և քսան անգամէն ետքը լիովին առող-
ջացաւ :¹

Իւ մագնիսական քնոյ՝ ջղային գրութեան
վրայ ըրած ազդեցութիւնը տեսնելով, բնա-
կանաբար մտածեցին բժիշկը օգտակար ընել
զայն վիրաբուժական գործողութեանց մէջ :
Իւ իրօք ալ, այս տեսակետով եւ շատ գե-
ղեցիկ արդիւնքներ առաջ եկան : Տօքդ. Յօր,
1889ին, մագնիսական քնոյ համազգային
ժողովին մէջ պատմեց իստալացի երիտասար-

դի մը առ ինքն դիմելը վիրաբուժելու համար
ճակտին վրայ եղած ուռեցք մը. — և մազ-
նիսական քնով ամենայն դիւրութեամբ՝ քան
թէ ըլրոակերպով անզգայնաւորով, յաջողեցաւ
գործն, և երիտասարդն բան մ'ալ չը զգաց :
— Այս փորձին յաջողութեան վրայ վստա-
հացած՝ սկսան վերաբոյժք զայն գործադրել,
տեսնելով՝ որ շատ զէպքերու մէջ ըլրոա-
կերպէն շատ աւելի կարեւոր օգուտներ ունի :

Բայց մագնիսական քունն՝ ոչ միայն
մարմնական հիւանդութեանց, այլ նոյն իսկ
հոգեկեանաց եւս մեծապէս օգտեց : — Այս ճշ-
մարտութիւնը կը հաստատեն բազմաթիւ զէպ-
քեր, իրողութիւններ, որոց մէկ քանին կը
պատմէր աօքդ. Պրիանտ 1889ի համազ-
գային առաջին ժողովին մէջ. կան ստուգի-
այնպիսի զէպքեր՝ յորս բժշկուած են յիմար-
ներ, մրթիէ, շողեկառօքով ճամբորդելէ չա-
փազանց վախցողներ, մտքի ալլալլութիւն-
ներ ունեցող անձինք, արք և կանայք, գո-
ղամուշներ, և այլն, և այլն : Շատ երկայն
պիտի ըլլայ՝ եթէ ուզենանք մանրամասն
պատմել այն զէպքերը, որոց մէջ կը տես-
նենք՝ որ բժշկուե՞ր են անդամադիւլի կերպով
ստախօսութեան հակումն ունեցողներ, ան-
զուժ, ծոյլ, աղտոտ, վատ, յամառ անձինք :
— Ալքոհլմոլութեան պէմ ալ մեծ գեղ և
դարման եղաւ մագնիսական քունն, ինչպէս
որ զանազան փորձերով զայդ կ'ապացուցա-
նէ Պօնի՝, այնպէս որ շատեր մագնիսական
քնոյ ենթարկուելէն ետքը այլ եւս ոչ ծիւր
և ոչ գարեջուր, և այլն, խմեր են :

Առասիկ ուրեմն իրողութիւնը, և ահա այն
մագնիսական քունն ալ՝ զոր հակաապկորդք
ֆառասակար, անբարոյական և սառնաշայա-
կան կը համարին յինքեան : Զարմառք-
ֆառասակար. վասն զի այսչափ հիւանդութիւն-
ներ և ցաւեր կը բժշկէ : — Անբարոյական-
որովհետեւ շատեր կ'ազատէ փախերու ծանր

1. Zeitschrift für Hypnotismus, Բ տարի. էջ 304 :
2. Premier Congrès international d'Hypnotisme,
էջ 202 :

5. D. r Bérillon, L'Onyophagie, etc.
4. Le somnambulisme provoqué, էջ 151 :

լուծեն : — Որոշանալով և որովհետեւ բնութեան գաղտնիք մ'է, ինչպէս է երկկարելովն, և այլն :

Որոշանալով, և մագնիսական ջնոյ առումը և կերպարանքով կրնան չարամիտը ստատանալական ազդեցութեան վերաբերեալ գործեր կատարել. անտարակոյս մագնիսական ջրուն շատ փափուկ կերպով գործանան ըլլալ գեղծմունք : Բայց այսու ամենայնիւ կրնանք պնդել որ ճշմարիտ, գիտնական մագնիսութիւնն առաջ կու գայ բացարձակապէս բնական պատճառներէ, և եթէ իտեմութեամբ գործածուի այն, միայն ենթականերու օգտին համար, այդ այլ զօրաւոր և շատ օգտակար ազդակ մ'է : Եւ կրնանք իսկ ըսել՝ թէ մագնիսութիւնն « Ժամանակակից կենսաբանութեան ամենէն գեղեցիկ շահերէն մէկն է », Ստատե՛՛ոյ բարութեան առ մարդն բրած ճոխ ընծաներէն մին :

Ոյսպէս կը տրամաբանեն պաշտպանը մագնիսական ջնոյ, Ab. Lelong, Ab. Méric. D.r Grasset, և այլ վերոյիշեալ մեծ բժիշկք. աստուածաբանք, բնապատումք, և այլն :

ԿԵՐՁԱԲԱՆ

Ներկայ մատենիս վեց գլուխներուն մէջ նախ՝ բոտ կարի մանրամասն ըսուածներէն յայտնի կը տեսնուի՝ որ մագնիսութիւնն առաջ գալու համար երեք պայմանք են կարեւորք, այսինքն, պայմանք՝ որ մագնիսական ջնոյ ենթակիցին անձին կը վերաբերին, — պայմանք՝ մագնիսացընողին վերաբերեալք, — պայմանք՝ մագնիսական ջրուն առաջ ընթելու միջոցներուն վերաբերեալք : Մենք այս երեք կէտերն ալ պարզեցինք թէ՛ վարպետական տեսակէտով և թէ գործնական օրինակներով և փորձերով, զորս կատարած և յիշած են նշանաւոր բժիշկք և հմուտք :

Երկրորդ՝ մագնիսական ջնոյ հակառակորդ և պաշտպաններուն կարծիքները և փաստերը ընդարձակ կերպով մէջ բերինք, և անով ցուցինք որ մագնիսական ջնոյ գործածութիւնն կամ գործարարութիւնն ունանց վատապարտելի և ապօրինաւոր կ'երեւի, իսկ այլոց ոչ վատապարտելի և ոչ ապօրինաւոր, այլ մանաւանդ թէ շատ օգտակար, միայն թէ նախ՝ զայն գործադրելուն անհրաժեշտ պայմաններն միշտ գործադրուին, ապա թէ ոչ՝ միշտ վատապարտելի կը մնայ այն, — երկրորդ ալ՝ Մագնիսական ջրունը մ'այն կը պաշտպանին իրենք, և ոչ թէ Հոգեհոգեւորիւնը, և այլն, զորս վերագոյն յիշեցինք :

Իսկ մենք զանազան ազգերու, աշխարհներու և տեղերու, բնակչաց սովորութիւնները, բոլորնուրեք, և այլն, ի նկատի առնելով, մասն զի մագնիսական ջնոյ գործադրութիւնն և գործադրողներն շատ շրջահապեաց ըլլալու են, այդ տեղեան և բնակեաց ողջամիտ և հմուտ ու բարոյաւոր անձանց կը թողունք վերոյիշեալ երկու հակառակ կարծեաց կամ միոյն կամ միւսին նախագաստութիւնը, քանի որ զեռ երկուքն ալ սոսկ կարծիք են. Բերկրայս ազատութեան :

Հ. Ս. ՍԱՐԳՍԻԱՆ



ՀԱՅ ՄԵՏԱՏՈՒՆԵՐԸ

(Շար. տես յէջ 115)

Դ.

ՓԻԼՍՈՓԱՅ — մասնազգիր Նուբահե Յակոբ պատրիարքի օրհնութիւնը իր նպատակը չոր կուտ Յովհաննէսի ժամանակ փայլած են շուրաւոր զաւատագիտմանները եւ ճշմարտեան բեղուն խաղաղութիւնը, որ առած և բազմաթիւ գործք մը իր նպատակը չապարհեալ երկարաժիշտ վարչութեան :

1. Պոլիսի պատրիարքներուն ամէնէն խաղաղ կամ ու՛ կազմակերպող ջաշարիտ պատրիարքն էր՝ հրկարատեւ, որ տնտեսական 25 տարի փորձի Պոլիսի աթոռ, և մեծու 1741թ :

2. Եւ սա 20 տարի իմաստուն խաղաղութեամբ վարեց պատրիարքութիւնը, սակայն ընդմիջումով :